# ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար
Տարեկան 12 Ֆր.
Վեցամսեայ 6 »
Արտասահմանի համար տարեկան 15 »
Վեցամսեայ 8 »

Ամերիկայի համար
Տարեկան 3 տոլ.
Վեցամսեայ 1.50 »

Ծանուցման տողը առաջին երեսին համար 40 ս և վերջին երեսի համար 20 սանթիմ է. երեքէն աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կըլլայ։
Վառնայի համար մէկ թիւ 10 սանթիմ

Նամակ և դրամ ղրկել խմբագրութեան հասցէին.

Редакция на вѣстникъ „Шаржумъ" Варна

Redaction du journal „Charjoum" Varna (Bulgarie)

Արտասահմանի համար մէկ թիւ )( 20 ՍԱՆԹԻՄ )(
Պուլկարիոյ համար մէկ թիւ )( 15 ՍԱՆԹԻՄ )(

Գրութիւնք ետ չեն տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ»Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ


## ԶԵԿՈՅՑ

Զատկական մեծ տօներու պատճառով «Շարժում»ի յաջորդ թիւը պիտի հրատարակուի յառաջիկայ ապրիլ 12ին՝ շաբաթ օր։

Խմբագրութիւն

## ՄԵՋՆԻՑ Է ԿԱԽՎԱԾ

Յաճախ Տաճկաստանում և արտասահմանում հայ յեղափոխական տեղական մարմինները հանդիպել են և հանդիպում են զանազան ընդհարումների հայ հարուստ դասակարգի ներկայացուցիչների հետ, Այն հասարակական գործակցութեան և պարտականութիւնների միօրինակ գիտակցութեան կապը, որ պիտի տիրէր նրանց մէջ, ներկայ ամենածանր և կարեւոր րոպէներում դժբաղդաբար բաժանվել է խոր, անյատակ անդունդով։ Յաճախ, տեսել ենք, ժողովրդային այդ երկու տարրերը մտնում են այնչափ խիստ վէճերի, ընդհարումների մէջ, որ տաճկաստանում, շնորհիւ այդ բռնակալ կառավարութեան ստեղծած դաժան պայմաններին, ողբերգական հետեւանքներ են ունենում հայ հարուստների վերաբերմամբ, տերրորով են վերջանում։ Դա ի հարկէ, շատ դառն և ցաւալի հանգամանք է մեր ներկայ յեղափոխական կեանքում, որը սասայն տասնեակ տարիների շրջանից յետոյ է՛լի շարունակում է իր գոյութիւնը։ Նոյն հանգամանքները կրկնվել են գրեթէ բոլոր գերի ժողովուրդների յեղափոխական կեանքում, բայց գրեթէ երբէք չեն արտայայտվել այդչափ սաստիկ բնաւորութեամբ և երկար ժամանակ։ Աւելորդ և անպատեհ է այստեղ յիշեցնել պատմական օրինակներ։ Դրանք անթիւ օղակների մի երկար շղթայի պէս ձգվում են պատմութեան ամբողջ ընթացքով, սկզբից մինչեւ այսօր։

Բայց արդեօ՞ք մեր չար բաղդից է, որ անհամաձայնութեան հրէշը մեր մէջ խոր բոյն դրած, հէնց մեզնից, մեր արիւնոտ կեանքից է ուզում բացառութիւն տալ պատմութեան այդ հին օրէնքին։ Չէ՞ որ նա ճլատում է մեր ուժերին, արգելք հանդիսանում մեր գործի յաջողութեան։ Միթէ՞ չենք կարող միահամուռ ջանքերով, մեր վերջին ուժերով տապալել այդ պատմական գարշելի հրէշին, ազատվել այդ աւանդական արիւնոտ գազանից, պոկել մեր գոյութեան իրաւունքը նրա արիւնածարաւ ժանիքից։ Մարդիկ երբեմն իրանց անելանելի վիճակի, անտանելի կացութեան և սարսափի ճնշող ազդեցութեան տակ՝ կորցնում են և գտնելու, խորհելու յատկութիւնը։ Այդպիսի հրէշ մեր մէջ յառաջանում, ծնվում է լոկ մեր սեփական թերութիւններից, անկարութիւններից։ Հասարակական կեանքում ոչ մի երեւոյթ տեղի չի ունենալ առանց իր բնապատճառի, կամ այլ նախընթաց երեւոյթների։ Այն՝ ինչ վերաբերվում է այդ անհաւ ընդհարումների պատճառներին, հիմքերին, կարծում ենք, որ այդ կործանիչ երեւոյթի գաղտնիքը պիտի փնտռել մեր հարուստ դասակարգի հասարակական դրութեան և ըմբռնումների մէջ, նրա տնտեսական կացութեան և հոգեբանութեան մէջ։

Հայ հարուստը, շնորհիւ իր տնտեսական նախանձելի վիճակին, այնչափ է հեռացել իր տառապող ժողովրդի արիւնաքամ սրտից, նրա ծով ցաւերից, որ հայ ժողովրդի այսօրվայ մղած գոյութեան կռիւը նրան թւում է շատ տարօրինակ, անբնական։ Նա հետաքրքրվում է հայի յեղափոխական շարժումներով այնչափ, որչափ կը հետաքրքրուէր և մի եւրոպացի Տրանսվալի պատերազմով, գուցէ և նրանից էլ պակաս։ Հայկական շարժումները նրա համար քաղաքագիտական հետաքրքրութեան սահմաններից դուրս չեն անցնում։ Նա չի իմանում, և որ ցաւալին է, չի ուզում իմանալ թէ՝ հայ ժողովուրդը տեսնում է իր բնաջնջման մռայլ հեռապատկերը։ Նա չի ըմբռնում մեր ընդհանուր դատի գոյութիւնը իր փոքական դրութեամբ։ Այդ զգացական ըմբռնումների վրայ աւելացրէք նրա հայ հարուստի յիշատակելի ժլատութիւնը, նրա ջհուդական հոգեբանութիւնը և ոսկի դիզելու անյագ ծարաւը։

Ահա՛ որպիսի անջրպետ կայ մեր ընդհանուր Դատի և հարուստի միջեւ։ Եւ հայ յեղափոխականը այսօր իր անհաւասար կռիւը առաջ տանելու համար ստիպված է յաճախ գործ ունենալ հայ հարուստի հետ, իբրեւ միակ աղբիւր նիւթական զօրութեան։

Այդ պատճառով էլ, երբ գնում է յեղափոխականը հայ հարուստի մօտ փող պահանջելու յօգուտ ազգ. դատին, նա զզվում է կարծես և գլուխը կորցրած դիմում է ամեն անազնիւ միջոցների։

Նրան թվում է, թէ աւազակներ են ներկայանում նրան և ուզում են ինչ որ անյայտ նպատակներով վերցնել նրա փողը, պարպել գանձարանը։ Նա չի անում միայն այն՝ ինչ չի կարող անել։ Նա իր հոգու խորքից անիծում է և՛ հային, և՛ նրա ազատագրական դատին։ Արհամարհում է նա պահանջող յեղափոխականին, մերժում, հալածում ..., յուսահատ դիմում է վերջին սարկական միջոցին— մատնութեան։ Էլ վստահօրէն կարող էք գիտենալ դրա հետեւանքը։ Մեր յեղափոխական կեանքը լիքն է այդպիսի պատահարներով... Եւ ուրիշ կերպ էլ չի կարելի լինել, քանի կը տիրեն հայ հարուստի գլխում այդ ըմբռնումները, նրա սրտում՝ այդ զգացմունքները։

Արդեօք կանգ կառնի՞ հայ յեղափոխականը իր գործունէութեան շրջանում նիւթական պահանջների և պայմանների առաջ—Ո՛չ։ Արդեօք կը շարունակվե՞ն նոյն ընդհարումները նրանց միջեւ—Չգիտենք։ Մենք գիտենք միայն մի բան և կասենք. վերցրէք այդ ըմբռնումները, զգացէք հայի ցաւը և ամեն բան կը վերջանայ։ Այն ժամանակ միայն կը կորչին այդ անախորժ պատահարները և հայ յեղափոխականը աւելի հեշտ և արագ կընթանայ, կը հարթի ազատութեան ճանապարհը։

Էմիլ Շղարշեանց

## ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Ռուսճուք 30 մարտ 1903

Ժամանակները կը սահին կերթան, մեզի շրջապատող իրերը, պայմանները կը փոխուին, ամեն բան կը շարժուի շուրջերնիս։ Միայն մենք, մեր կեանքը, ազգային զանգուածը այստեղ մեռելային միօրինակութեամբ մը կը շարունակէ իր տաղտկալի և աննախանձելի դրութիւնը անփոփոխ՝ իւր քանի մը թոյլ և անկայուն հաստատութիւններով։ Տեղւոյս Մանկապարտէզը, ընթերցարանը, աղքատախնամ ընկերութիւնը, Երգեցիկ խումբը, առժամապէս տեղս գտնուող հայ գերասանական «ՎԼՕԷԼՕ» խումբը՝ ամենքն ալ, կարծես խօսք մէկ ըրած, միօրինակ երերուն քայլերով դէպի անկումը կը դիմեն։

Մանկապարտէզը, որ ազգային երկսեռ վարժարաններու հոգքին պէտք է կանոնաւոր ընթացք մը ունենայ, գրեթէ բոլորովին անխնամ վիճակի մը մատնուած է այսօր։ Պէտք է ըսել որ կանոնաւոր մանկապարտէզի մը (ազգային) գոյութիւնը անհրաժեշտ է տեղաբնակ հայ գաղութիս համար։ Բոլոր յառաջդէմ, զարգացած ազգերու մէջ, կրթական տեսակէտէ, մանկապարտէզը ընդունուած է իբրեւ առաջնակարգ, անպայման պէտք մը, կրթական գործի սաղմը, հիմնաքարը։ Այդ

